

6.2 Սալերի խտությունը, ամրության սահմանները, խոնավությունը որոշում են՝ ըստ ԳՕՍՍ 17177 ստանդարտի:

6.3 Սալերի ջերմահաղորդականությունը որոշում են 105-110°C ջերմաստիճանում մինչև հաստատուն զանգված չորացված սալերի նմուշներով, ըստ ԳՕՍՍ 7076 ստանդարտի: Որպես արդյունք ընդունում են երեք նմուշների ստուգման արդյունքների միջին թվաբանականը:

6.4 Սալերի ձայնավանուսը որոշում են՝ ըստ ԳՕՍՍ 16297 ստանդարտի:

## 7 Փոխադրումը և պահումը

7.1 Սալերը փոխադրում կատարում են տրանսպորտի բոլոր տեսակներով համաձայն տրանսպորտի տվյալ տեսակի համար գործող բեռների փոխադրման կանոնների:

7.2 Փոխադրման, բեռնման և բեռնաթափման և պահման ժամանակ պետք է ձևոր առնվեն համապատասխան միջոցներ սալերի մեխանիկական վնասվածքներից և ձևախախտումներից ապահովելու համար:

7.3 Առանց փայտե կավարամածերի փաթեթավորման սալերը պետք է պահվեն դարսակների ձևով՝ դարսված կողերի վրա, սալերի երեք շարքից ոչ ավելի բարձրության դարսակներով շարքերի միջև տախտակե միջադիրներով: Սալերը կարող են դարսվել տափակ կողմով 10 հատից ոչ ավելի:

7.4 Սալերը պետք է պահվեն փակ պահեստներում կամ ծածկերի տակ 2 մ-ից ոչ բարձր դարսակներով: Դարսակները պետք է պահպանվեն մթնոլորտային տեղումներից:

7.5 Պահման ժամանակ սալերը պետք է տեսակավորվեն ըստ արտադրման թվականի:

## 8 Արտադրողի երաշխիքը

8.1 Արտադրողը երաշխավորում է սալերի համապատասխանությունը սույն տեխնիկական պայմանների պահանջներին սպառողների կողմից փոխադրման և պահման պայմանների պահպանման դեպքում:

8.2 Սալերի պահման ժամկետը չի սահմանափակվում: